Աշխատանքի ծածկագիր 1268

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան

15.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ի. Բաղմանյանի
մասնակցությամբ անդամներ՝ Ա. Աթանեսյանի
Վ. Դալլաքյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել է քաղաքացիական իրավունք բաժնի 9-րդ հարցը:

Հարց 9

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1167-րդ հոդվածի 1-ին մասով և 1168-րդ հոդվածի 2-րդ մասով:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1168-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ֆիրմային անվանման օգտագործում է համարվում նաև տվյալ իրավաբանական անձը նշելու նպատակով ֆիրմային անվանման կիրառումը ցուցանակների, ձևաթղթերի, ազդագրերի, ապրանքների, դրանց փաթեթավորման վրա, ինչպես նաև օրենքով չարգելված այլ կիրառումներ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Տ

Թիվ 1268 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ի. ԲԱՂՄԱՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ